

3323 - 3325

365

21

Г. Р.

491.99-8

U-82

1003

№ 4.

Inv29


Уп № 456.



huff

Digitized by srujanika@gmail.com

189



12002

ԵԱՐԺԸՆԱՆ ՍՅԲՈՒԹԵՆ

Կպցնել սոսուարաթղթի (կարտոնի) և կտրառել:

<i>u</i>	<i>uu</i>	<i>u</i>	<i>n</i>	<i>ur</i>	<i>un</i>	<i>un</i>
<i>n</i>	<i>2</i>	<i>2</i>	<i>h</i>	<i>q</i>	<i>b</i>	<i>b</i>
<i>n</i>	<i>կ</i>	<i>ս</i>	<i>n</i>	<i>g</i>	<i>�</i>	
<i>L</i>	<i>bL</i>	<i>nl</i>	<i>η</i>	<i>p</i>	<i>ի</i>	<i>l</i>
<i>q</i>	<i>o</i>	<i>d</i>	<i>թ</i>	<i>n</i>	<i>ð</i>	<i>ð</i>
<i>ð</i>	<i>u</i>	<i>ɛ</i>	<i>զ</i>	<i>կ</i>	<i>ó</i>	<i>կ</i>
<i>փ</i>	<i>p</i>	<i>j</i>	<i>փ</i>	<i>յ</i>	<i>ո</i>	<i>ի</i>

491.99-8

U-82

ՅՈՎՅ. ԱՐԱԲԵԶԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԱՐԱՋԻ ՏԱՐԻ



(Պատկերներով, գրութայք օղբառկմերով, գրաւոր վարժութիւններով եւ այլ ժամանակական աշխարհներով)

**Одобрена Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго
Округа для употребленія въ начальныx училищахъ.**

ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՊԱԳՐՈՒԹԻՒՆ




Ա Հ Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Լ
Տայարան Սահմուխանի եւ Ստեփանոսանի
1903

42388-42.

二、四

卷之三

မြန်မာ ပြည်တော်



Дозволено Цензурою. 7-го декабря 1902 года, г. Тифлисъ.

Одиссея гла рулем пленки ви маючи ся ви атмосферах.



26010-65

fibrodilatibial and *fibrodilatitibial* Amerosp.

8081



b p q u h l v o u f

(2-րդ տպագրութեան)


Մեր կազմած «Մայրենի Հեղուն» հրատարակում ենք երկրորդ տպագրութեամբ՝ այն փոփոխութիւններով, որոնք ցոյց են տրուած Կովկասի Ուսումնարանական Ծրչանի Հոգաբարձական Խորհրդից: Բացի այդ՝ այս տպագրութեան մէջ աւելացրել ենք՝ ա. մասում—գրութեան օրինակներ, իսկ բ. մասում—միքանի յօդուածներ եւ նիւթեր գրաւոր աշխատութիւնների համար:

Հնայելով, որ յիշեալ յաւելումների շնորհիւ տպագրութեան
ծախսերը կրկնապատկում են եւ զբքի ծաւալը մեծանում է,
այնուամենայնիւ մենք նրա գինը պակասեցնում ենք, որպէս-
զի այդ կողմից բոլորի համար էլ մեր «Մայրենի Լեզուն»
մատչելի լինի:

ne 0,0 d),

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ԱՅԲԲԵՆ ԵՐԱՆ

1.




Ար

ա, ա՛, թ, ար.

ա ա. ա ա ր. ա - ա ա. ա - ր ա:

2.



մաս

լ, գ, բար.

ԱՅԲԲԵՆ ԵՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

(մաս Երացքարան գլ-2)


1. Իւրաքանչիւր դասի սկզբում մի պատկեր իւր անունով, որի օգնութեամբ մանուկները հեշտութեամբ կ'իմանան, թէ ինչպէս է կարդացւում անծանօթ տառը:

2. Նոր տառով բառեր (վանկերի բաժանած)՝ կարդալու և գրելու համար:

3. Փոքրիկ նախաղասութիւններ և հայկական դիւրըմբոննելի առածներ (վանկերով և առանց վանկերի)՝ կապակցական ընթերցանութեան համար:

Մաս. տաս. տար. արտ. տամ. տ-տամ. Ա-րամ:


3.



մաս դ, ժագ

Աղ. մաղ. տաղ. ա-րաղ. տա-րաղ:—Ա-րամ, տաղ ա-սմ:

4.



տաշտ դ, դաշդ

Տաշտ. շատ. շա-մամ:—Ար-շամ, շա-մամ տամ:

5.




շիշ

ք, շիշ

Իմ. մի. միա. տա-րի. մա-տիտ:—Մա-րի-ամ, ա-րի,
մաղ տամ:

6.



սազ դ, սագ

Սա. սազ. զա-րի. Մազ-տազ:—Մար-զար, ա-րի, զա-
րի տամ: Մարզիս, շամամ տար:


7.



b-րես

Ես. եղ. տեղ. ա-սեղ. ա-ղեղ:—Մարիամ, երգ եր-
զիր: Ես մի երգ զիտեմ:


8.



nun

Որ. որս. որ-տեղ. շոր. գող. զող-ղեր:—Մարդա-
բնտ, որ-տեղ ես: Գրիգոր, շոր տար: Մարգիս, արի,
որսի միս տամ:


9.



կար

Կեր. կա-րաս. եր-կար. ոս-կի:—Աստ-դիկ, շոր
կա-րիր: Մակար, մատաղ արա: Կատար, մի երգ երգես:

10.



նա-մակ

Նա. նան. Ան-նա. զի-նի. մա-տա-նի:—Ես մե-
նակ եմ: Նանի, կարաղ տա՞ս: Ճողիկ, տատին նամակ
տար: Մանիկ, աղ մաղիր:

11.


10

տա-սր

թ, տասը

Ըն-կեր. ըն-տիր. ըն-տա-նի. մա-ղը. կա-րա-սը:—
Ար-շա-կը գի-նի կը-տա-նի: Աստղիկ, իմ ընկեր Սի-
սա-կին որ կը տեսնես, արի, ատա:

12.



ցանց

չ, ցանց

Գրի-զո-րը ցո-րեն ցա-նեց: Ա-շա-կեր-տը նա-մակ
զը-րեց: Իմ ընկերը սարը զնաց: Մացակը կացինը
սեղանի տակ զցեց:

13.




Ե2

թ, եշ-

Կա-րի-նին մեր տա-նըն է: Գէ-որ-գը իմ ըն-կե-րըն
է: Իմ զեղեցիկ մատանին մատիս է: Մղոցը սեղանի
տակին է: Մեր սազը շատ զեղեցիկ է:

14.




նալ

չ, նաւ

Նաւակը գետի երեսին է: Կաւից ամաններ շինեցին: Եսաւը որսի գնաց: Նաւատէրը նոր նաւ գնեց:

եւ—և



ԱՆԵ-ՐԵԼ

Է, դրիք.

Սև. արև. կեղև:—Ջողիկը և Աստղիկը: Արամը և Գեղամը ընկերներ են: Գետնին շատ տերևներ կան: Եղևնին գեղեցիկ է:

15.




ԿԱ-ՄՈՒ

Ա, խայռու

Ջունը շանից, երկուսը մի տանից: Ջունըն ու

կատուն իրար միս են ուտում. Արշակը մեր ուրազը կորցրեց: Ուսումնարանում մանուկները գրում են:

16.




ՂԱ-ՆԱԿ

Դ, դանակ.

Ուղտըն ընտանի կենդանի է: Մեր դրացին դանակ գընեց: Դուրը դարակումն է: Գող, սիրտը դող: Մեր դրացու որդին իր դասը գիտէ:

17.




ԲԱԿ

Բ, բագ.

Բագարան, բամբակ գընիր, տատին տար:

Բամբակը դաշտում մըն է բռունում: Մանուկ,
միշտ բարի եղիր: Բարի մարդկանց ամենը սիրում են:
Բաղը գետում գորտ է որսում:


18.



հալ *h, hal*

Աղու հաց, սիրտը բաց: Դարբինը բահ է շինում: Դանակը ոսկորին մի՛ հասցնիր: Համբերող եղիր: Հեղինէն համեստ է:


19.



բալ *b, bal*

Լուսինը լուսաւում է երկիրը: Սազերը լողում
են գետի երեսին: Լաւ տղան ընկերից կ'երևի: Մի
ասիր, մի՛ լսիր: Լորը արտերումն է շինում իր բունը:


20.



զանգ *z, zang*

Ողնին կենդանի է: Լեզուն դանակից սուր է: Զարուհու մազերը շատ երկար են: Բզեզը բըզզում է: Բազին հաւ տարաւ: Դազանները սարերումն են բնակում:


21.



օ-դակ *o, odayk*

Սև օրին էլ սև չոր է հարկաւոր: Մօտիկ հարեւանը բարեկամից լաւ է: Մահը մէկ օր, լացը մէկ օր: Իմ հօր կօշիկները օրօրոցի տակն են:

22.




dur F. Sard.

乙
一
八

26010-4

Ժամանէլը մարդիկ ժամեն զընում։ Բը-ժիշկը հիւանդին զեղ է տալիս։ Ժամանակը ոսկի է։ Բաժակը սեղանին է։ Գծի համար ամեն օր նոր տարի է։

23.



Puu

P, P.M.

Բաղի թա-թը կարմիր է։ Թե-լը որ բա-բա-կեց,
կը-կըտ-ըի։ Թող սև լինի, շատ լինի։ Մեր թասը դա-
տարկ է։ Ճողակաթը կաթ բերեց մեզ։ Թանիը թթու է։
ուրբաթ օրը տօն է։

24




6

pbn pbn, pfn

Ազ-ուա-ւը կրո-կը-ոռոմ է: Ոռո-րէ-նը մա-ռա-նից
զա-ռի միս է բե-բում: Գառը զարնանը կըլինի: Ես
շատ ռուսերէն բառեր գիտեմ: Դնա մեռիր, արի սիրեմ:
Գանակը ոսկոռին է հասել:




25.



ծառ *č, čan*

Կար-կու-տը ծե-ծած տե-ղը կը-ծե-ծէ: ծե-րա-նաս,
ծե-րի հա-լը ի-մա-նաս: ծիծեռնակը գարնանը կ'երեի:
Լեզուն ածելուց սուր է: Ամեն ծաղիկ իր հոտն ունի:
Հացը դրած, բանն անիծած:


26.



ճանճ *č, čanč*

Ճա-հի-ճում շատ ճի-ճու-ներ կան: Ճա-գա-րը սի-րուն
կեն-դա-նի է: Ճրագը գիշերն է հարկաւոր: Մաթենիկը
ճաշ է անում: Եղրօրս ճակատը շատ կնճիռներ ունի:


27.



պար-տէզ *պ, պարտէզ*

Պա-պը պար-կած է պար-տի-զում: Պաս ու-տեմ
պաս, Էն էլ թա-նէ սը-պամ: Նապաստակն ու ճագարը
մի ցեղից են: Մեր եզր երկար պոզեր ունի: Հաց ու
պանիր, կեր ու բանիր:

28.




գրիչ *չ, չրիչ*

Ճան հա-շա-լուն մի հա-ւա-տալ: Ճու-նը շան մը-սից
չի ու-տիլ: 2ար մանուկները շարչարում են ճանճերին:

Մին առանց ոսկոռ չի լինիլ: Ինչ կ'ասես, էն կըլսես:
Ուրագն իր կոթը չի տաշիլ:

29.



Չու-Թակ

Ջր-րի բե-րա-ծը ջու-րը կը-տա-նի: Ջըր-հո-րից մար-
դիկ ջուր են հա-նում: Կուժը ջրի ճամպին կըկոտրի:
Արջը զարհուրելի գաղան է: Ջրաղացում մարդիկ հացա-
հատիկ են աղում: Անջուր ջրաղաց, անկրակ բաղարձ:

30.



Վարդ

Վագ-րը վի-րա-ւո-րեց որ-սոր-դին: Վարդը շատ հո-
տաւէտ է: Ուղտին գղալով չեն ջրիլ: Ճոմը կաղալով
չի սատկիլ: Մէկ ծաղկով գարուն չի գալ:


31.



άհ

Զըկ-նոր-սը ցան-ցով ձուկ է որսում: Կար-միր ձուն
Զատ-կին կը-սա-զի: Ինչ որ ցանես, էն կըհնձես: Էշը
զատի, ձին ուտէ: Անուշ լեզուն օձը ծակից կըհանէ:


32.



իւղ

Խողը շատակեր կենդանին է: Մեղքը ծախողը
մատը կը-լի-զէ: Չուկը գլխից կըհոտի: Խեխն խրատը,
սեխն սապոնը ի՞նչ անէ: Ինչ կըբրդես, էն կըխրթես:


33.



փիղ *f, phη*

Փղապանը փողոցով փիղ է ման ածում: Մե-
ղոները փեթակում մեղը են շինում: Վարդն առանց
փշի չի լինի: Վարդը վերցրու, փշին կրակ տուր:


34.



փիթ *f, phθ*

Տաշած քարը գետնին չի մընալ: Մենք աշքով
տեսնում ենք: Քամու բերածը քամին կրտանի: Օձն
առաջ իրան տաքացնողին կըկծի: Ճիտակ խօսքը հա-
նաքի միջով կասեն: Քիչ բարձիր, չուտ դարձիր: Երկա-
թը տաք-տաք կըծեծեն:


35.



փուր-զօն *f, phn r̥zɔn*

Փուր-զօնով ապրանք են կը-րում: Թուրքերը
ֆէս են ծած-կում: Նունուֆարը գեղեցիկ ծաղիկ է:
Ֆառաշով աղը են հաւաքում: Օձը ֆըշում է: Փղին
ֆիլ էլ են ասում: Գնչուհին ֆալ է բաց անում:

36.



յու-վազ *f, yuvaq*

ինցու զմբ՞ս զամ-դի ։ I
մեծ մասունք մենաց սեպան տնակ նորուն
Յունիսին մենք յար-մար բնա-կա-րան կը-զլտ-նենք։
Յուլիսին եղանակն անտանելի է դառնում։ Յուղովն
ինքն է հոտած, հինց գիտէ՝ բունն է հոտած։

II.



Այծ

Հայրս մի դայլի ձագ բոնեց։ Աստծու պահած զառը
դայլը չի ուտիլ։ Որտեղ հաց, այնտեղ կաց։ Մայրս ու
եղբայրս այգի կնացին։


III.

Նտ հայ է։ Կայ ձեղ։ Եղբայրս այսօր թէյ չ'ոնի։
Ճայը ճահճային թոշուն է։ Օ՛յ, ինչ շող եղանակ է։
Հէյ, բարեկամ, այդ ուր ես զնում։

IV.

Մինչև տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ։ Զուրն
ընկնողը անձրեկից չի վախենայ։ Զուրը շտեսած մի
բոբիկանայ։ Ով որ խաղայ, նա կըկաղայ։ Գայլն ամպ
օրը կ'ուրախանայ։ Այսօր մի քահանայ տեսայ։ Բանդ
արա, յետոյ խաղա։

V.




ԺԱ-ՄԱ-ՃՈՒՅ

Ժամագործը ժամացոյց է շինում։ Մի ծաղկից օձը
թոյն է շինում, ճանճը—մեղը։ Մակոյկով լողում են
զետի երեսին։ Ժառը բոյս է։ Ծոյլ աշակերտը պատժի
արժանի է։ Քոյրս Արշալոյսին նամակ է գրում։

37.


I.



առիւծ

Կիւրակի օրը իւղալի կերակուր կերանք: Հիւրն
եկաւ, հիւրը գնաց, տեղը դատարկ չմնաց: Աղբիւրի մօտ
մեծ բազմութիւն կայ: Աշակերտը իւր դասն է սովորում:

II.



արծիւ


Փոքրերը պէտք է պատիւ տան մեծերին: Փողե-
րիդ հաշիւը գիտցիր: Մեր դրացու տունը սուգ ու շի-
ւան կայ: Հիւանդը որ գնալու լինի, մատաղը չի օգնի:
Ճերանաս, ծերի պատիւը կ'իմանաս:

38.

եա. եօ.

Համբերութիւնը կեանք է: Եօթը ծովից, մէկ կո-
վից: Կարծեօք սենեակում մարդ կայ: Արդեօք Երբ
պէտք է երկինքը պարզէ և լուսնեակը դուրս գայ: Յի-
սուս Քրիստոս եօթանասուն երկու աշակերտ ունէր:

39.




աղուէս

Աղուէսը խորամանկ կենդանի է: Զուի գողը ձիու
գող կըդառնայ: Զմեռուայ վարդը կրակն է: Ամառուայ
փուշը, ձմեռուայ նուշն է: Պատուին խաղ է, մկանը
մահ է: Գետինը ձիւնով ծածկուեց: Այսօրուայ գործը
վաղուան մի թողնիր:

40.

Զգալ—ըզգալ: Հտապել—ըշտապել: Մկսել—ըոկսել:
Ստանալ—ըստանալ: Սպիտակ—ըսպիտակ:

Մկդում Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը:
Սպոնգը ծովից են հանում: Սպիտակ շունը բամբակ
ծախողին վնաս է: Հտապողին չի յաջողուիլ: Մկիւռը
թոշկոտում է ծառից ծառ: Ցուրտն արդին զզալի է:
Երեխաներն զրօնում են պարտիզում: Զգոյշ կացէք,
փորձոթեան մէջ չընկնէք:



Ա Յ Ա Ր Ի Ա Յ

առն զբար կոչ է վճարման թմունապատ զաշում
առանձնանութեան զբար զբարի առանձնանութեան զբարութիւնը բար
զբարն է բար առանձնանութեան մէտ առանձնանութեան զբար
զբար առանձնանութեան իսկունք զբարութիւնը է հան
որդիքութիւն մատարափ

ՀԱՅԵՐԻՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ, իս, ծ, կ, հ, ձ,
ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
ք, հ, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ, իս, ծ, կ, հ, ձ,
ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
տ, ր, ց, ւ, փ, ք, հ, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ, իս, ծ, կ, հ, ձ,
ղ, ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
տ, ր, ց, ւ, փ, ք, հ, օ, ֆ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Լ, Թ, Ժ, Ի, Լ, ԻՍ, Ծ, Կ, Հ, Ձ,
Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ռ, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ,
Ց, Ւ, Փ, Ք, Հ, Օ, Ֆ:



ՀԱՅԵՐՔՆ ԳՐՉԱԳԻՐ ԱՅԲՈՒԹԵՆԸ:



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՓԱՀԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱ
ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ.

1. *U* *&* *U* *h* *o* *s*

Հուսացաւ, լուսացաւ, լոյսն է բարին, ծիսն է ծառին հաւն է թառին։ Աշխատաւո՞ր, վեր կաց բանի. ծոյլ տղայի քունը կըտանի։



2. *U* *&* *U* *?* *U* *?*



Դու ինձ ասա, աքաղաղ, ոսկէ կա-
տարիդ մատաղ, կարմիր մօրոքիդ մա-
տաղ. ինչո՞ւ ես շուտ արթնանում, բար-
ձըր-բարձը երգ ասում, քաղցր քունս
խանգարում:


3. ՔԱԶ ՇՈՒՆ

—Ճնիկ, ինչու ես հաշում:
 —Գայլերին եմ վախեցնում:
 —Ճնիկ, ինչուպոշդքեզքաշեցիր:
 —Գայլերից եմ վախենում:



4. ԲԱՐԻ ՇՈՒՆ

Ճունը պահպանում էր իւր տիրոջ տունը: Նա տեսաւ մի աղքատ մարդու և սկսեց նրա վրայ հաշել:
 —Սիրելիս,—խնդրեց աղքատը,—խղճա ինձ. ահա երեք օր է, որ ոչինչ չեմ կերել:
 —Ես էլ նրա համար եմ հաշում,—պատասխանեց շունը,—որ մարդիկ լսեն ձայնս և քեզ կերակրեն:



5. ԺԻՑԾ ԵՀ ԲԱԶԻՆ

Ժիտը ծառին ժըլվըլում է
 ժիւ, ժիւ, ժիւ:
 Բազին գլխին պտըլուում է,
 վրւ, վրւ, վրւ:
 Ժիտը լոեց, ժիտը վախեց,
 վայ, վայ, վայ:

Բազի, թըռռ, բազի, թըռռ,
 չայ, հայ, հայ:
 Բազին թուաւ,
 Բազին վախաւ,
 ի՞նչ լաւ եղաւ,
 չէյ, հէյ, հէյ:

Ժիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,
 Պըտպըտուրիկ, չըլպըտուրիկ,
 Դու լաւ պրծար չար բազիի
 Սուր ճանկերից, հա, հա, հա:



6. ԿԱՑՈՒՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Որսկան շունը մի նապաստակ էր բռնել: Կատուն այդ որ տեսաւ, շանը նախատեց ու ասաց. „Ի՞նչ անգութն ես“: Հինց այդ րոպէին մի փոքրիկ մուկը ծակից դուրս եկաւ և վազելով անցաւ նրանց առաջից: Կատուն վրայ հասաւ, բռնեց ու կերաւ: Ճունն ասաց.

— Այդ ի՞նչ ես անում։ Դու ինձ նախատում ես, որ
ես մի նապաստակ եմ բռնել իմ տիրոջ համար, իսկ
ինքդ մուկն ես բռնում ու անուշ անում։

— Է՞հ, ոչինչ, իմ կերածը մի չնչին մուկն է, — ողա-
տասխանեց կատուն։

Քո աչքի գերանը թողած, ուրիշի աչքի շիտն ես սլորում։

7. Կ Ա Ճ Ո Ւ

Կատուն եկաւ, փիսի՛կ-փիսի՛կ,
Հազար նազով՝ ինչպէս հարսիկ.
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց շանչիկներով։
— Կատու, կատու, Է՞ր ես տրտում.
Թէ մկներն են այսօր արթուն։

8. Զ Ե Չ

Փոքրիկ Աննայի մայրը հիւանդացաւ և բժիշկը
նրան մի դառը դեղ տուեց խմելու։ Աղջիկը տեսաւ, որ
մայրը դժուարութեամբ է խմում դեղը, ասաց նրան։

— Մայրիկ, տուր, ես խմեմ քո փոխարէն։

9. Խ Ե Հ Ա Յ Ի Ա Գ Ո Ջ Ա Կ Ը

Ազուալը ծարաւ էր։ Նա շատ դէսուղէն ընկաւ և
վերջապէս դաշտում տեսաւ
մի կճուճ, որի մէջ ջուր կար.
բայց ջուրն այնքան ցած էր,
որ ազուալը չէր հասնում։ Նա
սկսեց մանր քարեր գցել
կճուճի մէջ. այլպիսով ջուրն
այնքան բարձրացաւ, որ նա
խմեց, ծարալը կուրեց և թռաւ, իւր գործին վնաց։

10. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՑՈՐՑԵՐԸ

Մանուկները խաղում էին զետի ափին և յանկարծ
տեսան, որ ջրում շատ գորտ կայ։ Նրանք քարեր հա-
ւաքեցին և սկսեցին մէկ-մէկ քարկոծել գորտերին։ Երե-
խաները սաստիկ ուրախանում էին։

Մի գորտ գլուխը զուրս հանեց ջրից ու ասաց.


— Մանուկներ, բաւական է քար զցէք. դա ձեզ հա-
մար խաղ է, իսկ մեզ համար — մահ։

Առաջ. — Կատուին խաղ է, մկանը մահ է։



11. Ա Ր Ե Խ


Արև, արև, եկ, եկ,
Նախշուն քարին վեր եկ,
Մեր ոչխարին մտիկ արա,
Որ գայլը գայ, իմաց արա:



12. ԱՅԲՅԵՆԱՐԱՆ

Փոքրիկ մանուկը միշտ տեսնում
էր, որ հայրը գիրք կարդալիս ակ-
նոց էր զնում աշքերին: Մի օր էլ
նա խնդրեց հօրը.

— Հայրիկ, ինձ համար էլ ակնոց
զնիր, ես էլ ուզում եմ քեզ պէս գըր-
քեր կարդալ:



— Լաւ, — պատասխանեց հայրը. —
Ես քեզ համար մանկական ակնոց կըզնեմ: — Եւ որդու
համար զնեց մի այբբենարան:

Առաջ. — Ով կարդայ, նա մարդ ա:

13. ԿԱՐԴԱԼ-ԳՐԵԼ

Երբ որ լեզուս բացուեցաւ,
Սզատ խօսիլ սովորեցայ,
Բարի մօրս ձեռքի տակ,
Գրել — կարդալն սկսայ:

Ճատ ժամանակ շանցկացած,
Այլևս գիր կարդալը

Անպէս գժուար չէր թւում,
Ինչպէս կ'ասեն ծովերը:

Այսուհետև ինձ համար
չոլ, վէգի, գնղակի չափ.
Սիրելի են թուղթ, գրիչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ:



14. Ք Ա Մ Ա Ճ Ո Ւ Խ

Դասատան մէջ նատում են աշակերտները: Աշ-
կերտների առաջ նատած կամ կանգնած է վարժապե-
տը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սո-
վորում են: Դասատան մէջ աշակերտները կարդում են,
գրում են, հաշում են, նկարում են: Աշակերտների
գէմ գրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի
մօտ կան կաւիճ և սպոնզ: Գրատեղանների վրայ գրած
են դասական առարկաներ — գիրք, տետրակ, քարե-
տախտակ, քարեգրիչ:

Դասական առարկաներ: — Գիրք, տետրակ, քարետախտակ, գրչա-
կոթ, գրիչ, մատիտ, քարեգրիչ, քանոն, թանաքաման, սպոնզ:
Խաղալիքներ: — Գնդակ, տիկնիկ, բզզան, վէգ...

ԳՐԱԿԱՐԱՎՈՐ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Արտազրեցէք այս բառերը և ձայնաւոր տառերի տակ գիծ քաշեցէք: Յետոյ առանձին գրեցէք ձայնաւոր տառերը:

Աղ: Մաղ: Եզ: Հշշի: Դիմի: Հնկեր: Մուկը: Որդ: Ոզնի: Օրիորդ: Ուղտ: Շուն: Կատու:

2. Գրեցէք հայերէն այբուբենի բոլոր բաղաձայն տառերը:

Ա, Ե, Ղ...

3. Լրացրէք այս վարժութիւնը:

Գիրքը ղասական առարկայ է: Գնդակը խաղալիք է: Մատիտը... Գըիշը... Վէզը... Տետրակը... Ծիկնիկը... Բզզանը... Քարետախտակը...

15. ՄԱԳԻԿ

Սագիկ – մագիկ,
Իմ սիրունիկ,
Ես քեզ կըտամ
Քաղցր կուտիկ,

Որ գու ուտես,
Ճուտ մեծանաս,
Ուրախ ապրես,
Ճուարճանաս:

Կեր, իմ սագիկ,
Կեր, սիրուրիկ,
Որ մեծանաս,
Մեծ սագ դառնաս:

Երբ մեծանաս,
Մեծ սագ դառնաս,
Ես կըխնդրեմ
Իմ մայրիկիս,

Որ նա ժողուէ
Քո վետուըներ
Եւ ինձ համար
Ջինէ ըարձեր:

16. ՄԱԳՆ ՈՒ ԱՐԱԳԻԼՔ

Լողում էր սագը լճի երեսին, լողում էր և այս-
պէս խօսում ինքն իրան.



— Ճշմարիտ, ի՞նչ զարմանալի
թոշուն եմ ես: Գետնի վրայ
ման եմ գալիս, ջրումը լողանում
օդումը թռչում: Ինձ նման տրիշ
թռչուն չկայ աշխարհիս երեսին:

Արագիլը լսեց սագի խօսքերը և ասաց նրան:

— Ճատ յիմար թռչուն ես դու, սանգիկ: Որ այդ-
քան պարծենում ես, ապա, ասա, տեսնեմ, կարող ես
ձկան պէս լող տալ, եղջերուի պէս վազել կամ արծուի
պէս թռչել: Աւելի լաւ է մի բան իմանալ և հիմնաւոր,
բան թէ շատ բան և բոլորն էլ թերի:



17. ԲԱԳԻԿ

— Բագիկ, բագիկ,
Կարմիր թաթիկ,
Ուր ես գնում կամաց-կամաց:
2ագուկներդ չորս կողմդ առած:
— Ես գնում եմ ջուր գտնելու,
2ագուկներս լուանալու,
2ագուկներս մաքուր-մաքուր,
Տղոց երեսն աղտ է ու մուր:

18. Մ Ճ Ա Խ Թ Ս Հ Ո Վ Ի Ի Ղ

Մի փոքրիկ հովիւ սովորութիւն էր արել խարել
իւր ընկերներին: Ջատ անգամ նա երկիւղալի ձայնով
կանչում էր.

—Գայլը եկաւ, գայլը եկաւ:

Հովիւները գալիս, տեսնում էին, որ գայլ չկայ:
Խսկ ստախօս մանուկը ծիծաղում էր նրանց վրայ:

Մի օր էլ այս հովուի հօտի վրայ մի գայլ յար-
ձակուեցաւ: Նա սրտապատառ սկսեց կանչել.

—Գայլը եկաւ, գայլը եկաւ:

Ընկերները կարծեցին, թէ էլի խարում է, տեղե-
րիցը շշարժուեցան: Գայլը նրա հօտի մէջ ընկաւ և
պատառուեց ոչխարներին:

Առած.—Սուտ ասողի տոմսը կրակ ընկաւ, ոչ ոք չհասատաց:

19. Հ Ո Վ Ո Ւ Ի Ա Ն Կ Ո Զ Ի Ն Ը

Սարի լանջը մահճակալ,
Տեշոտ քարը դլխակալ,
Մի հին կարսկետ ուսերին,—
Եյս է հովուի անկողին:
Երբ անձրև է կաթկաթում
Եւ կարսկետը թթխկթթխկում,
Հովիւն անուշ քնի մէջ
Քաղցր երազ է տեսնում:
Եւ խնդում,
Ծիծաղում...

Ուխայ, ուխայ, սիրուն հովիւ, քունդ անուշ:

20. Ռ Ճ Մ Ա Ր Ց Ա Խ Թ Ս Մ Ա Ն Ո Ւ Խ Բ Ռ

Մանուկին մի փոքրիկ ուրագ ընծայեցին: Նա այն-
քան ուրախ էր, որ ձեռքն ընկածը կոտրատում, փշա-
ցնում էր: Մանուկը մինչև անգամ կտրեց մի ծառ,
որը նրա հայրը տնկել էր այգում: Երբ որ հայրը տեսաւ
փշացրած ծառը, սաստիկ տիսրեց և հարցրեց որդուն.

—Ո՞վ է կտրել այս ծառը. ես պէտք է խիստ
պատժեմ յանցաւորին:

—Ի՞նձ պատժիր. ես եմ արել այդ, — պատասխա-
նեց մանուկը:

—Եյս ծառը շատ սիրելի էր ինձ,—ասաց հայրը,—
բայց քո ճշմարտախօսութիւնն ամեն բանից թանկ
արժէ:—Եւ նա գրկեց ու համբուրեց որդուն:

21. Կ Ո Յ Ր Ը

Մի անգամ, գիշերը, մի կոյր մարդ մէկ ձեռքում
կճռւճով կաթ, խսկ միւսում մի վառած լապտեր բրո-
նած, կամաց-կամաց առաջ էր գնում: Ճանապարհին
նրան պատահեց մի երիտասարդ և ասաց,

—Այ յիմար մարդ, ինչի՞դ է հարկաւոր այդ լապտե-
րը. չ՞ որ զու ոչինչ չես տեսնում:

—Եյս լապտերը ես վերցրել եմ քեզ նման խելացի
մարդկանց համար, որ նրանք շղիւշեն ինձ և կաթս
շթափեն, — պատասխանեց կոյրը:

Առած.—Կոյրն ի՞նչ կ'ուզէ — ջուխտ աշխով լոյս:

22. ԿԱՐԱՄԻՒՆԵՐ

Ամեն մի տան մէջ կարասիներ կան—սեղաններ, աթոռներ, պահարաններ, մահճակալներ։ Կարասիները շինում են փայտից և ներկում են, որ չփշանան և գեղեցիկ լինին։ Աթոռների նստելատեղերը շատ անզամ փափուկ կտորով են ծածկուած լինում։ Կարասիները շինում են ատախծագործները։

Կարասիներ։—Սեղան, աթոռ, պահարան, բազմոց, բազկաթոռ, մահճակալ, նստարան, գզրոց, դարակ։

ԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Արտագրեցէք այս միավանկ բառերը։

Օր։ Եզ։ Խաղ։ Մաղ։ Արջ։ Հայր։ Հող։ Բանու։ Խաւ։ Եշ։ Շիշ։ Քար։ Մուրճ։ Դուր։


5. Գրեցէք ձեզանից միքանի միավանկ բառեր։

6. Վանկեցէք այս բառերը։

Անի։ Աղի։ Եթէ։ Եղան։ Արա։ Ռոլիդ։ Իրան։ Օղակ։ Կաշի։ Կողակ։ Մեղու։ Շաքար։ Կօշիկ։

7. Լրացրէք այս վարժութիւնը։

Գիրքը դասական առարկայ է, իսկ սեղանը... Բզզանը խաղալքը է, իսկ բազմոցը... Նստարանը կարասի է, իսկ թանաքամնը... Քանոնը դասական առարկայ է, իսկ պահարանը... Մահճակալը կարասի է, իսկ սպոնզը...



23. ԵՐԿՈՒ ԱՅԺ

Առուակի վրայով մի նեղ գերան էր զցած անցուղարձ անելու համար։ Մի անզամ երկու այծ պատահեցան այդ գերանի վրայ։ Երկուսը մի անզամից չէին կարող անցնել. պէտք է մէկը յետ դառնար և միւսին ճանապարհ տար։ Բայց ոչ մէկը չէր ուզում այդ անել։ Նրանք սկսեցին վիճել։

— Դու յետ քաշուիր, — ասաց մէկը. — առաջ ես եմ բարձրացել գերանի վրայ։

— 2է, — վրայ բերեց միւսը. — թող, որ առաջ ես անցնեմ. ես քեզանից մեծ եմ։

Եւ այծերը, ճակատ - ճակատի տալով, սկսեցին կուել։ Հակառակի պէս գերանը թաց էր։ Կուեցին, կուեցին և երկուսն էլ թըրըմալով ջուրը թափուեցան։

24. ՊԱՌԱԽՆ ՈՒ ԱՅԺԾՂ

Կար-շկար երբեմն

Մի աղբատ պառիկ.

Ոնէր մեր պառաւը

Կաթնատու այծիկ։

Հալիկ-մալիկ

Կաթնատու այծիկ։

Պառաւը ձմեռը

Այծիկը պահեց,

Եւր բերնի պատառը

Նրա հետ կիսեց։

Միրով-յօժար

Նրա հետ կիսեց։

Հիւնը հալուեցաւ,

Բըսաւ կանաչ խոտ,

Պառաւն այծիկը

Դուրս տարաւ արօտ։

Ուրախ-զուարթ

Դուրս տարաւ արօտ:

Թանձր մառախուզը

Գետինը պատեց,

Պառաւի առջևից

Այծը կորցրեց:

Ափսոս, ափսոս,

Այծը կորցրեց:

Պառաւը լաց եղաւ,

Իսկ գայլը օռնաց

Խեղճը մնաց կանգնած

Մի փունչ խոտ ձեռին,

Անմիմիթար ձայնով

Կանչելով այծին՝

Ե-կ-ե-կ, ե-կ-ե-կ

Կանչելով այծին:

25. ԲԱՐԻ ԳԻՒՂԱՅԻՆ

Գիւղում մի աղքատ ընտանիք էր ապրում— հայր,
մայր և երկու տղայ: Դրանց ազգականը մեռաւ և մի
որբ աղջիկ թողեց: Նրանք այդ աղջկան բերին, իրանց
տանը պահեցին:

Կինն ասում էր մարդուն.

—Այ մարդ, Աշխէնին որ մեղ մօտ վերցրինք, մեր
վերջին կողէկն էլ նրա վրայ կըզնայ. աղի փող էլ չի
մնալ, որ աղ առնենք, կերակրին խառնենք:

— էն, ոչինչ,— պատասխանեց մարդը, — մենք էլ
կերակուրն առանց աղի կուտենք:

Առած.— Աղ ու հաց, սիրտը բաց:

26. Ո Ր Բ Ի Կ

Փայլուն արել արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց, թաք կացաւ.
Գիշերուայ մութը աշխարհս պատեց
Եւ աշխանային ցուրտ քամին փշեց:

Սմեն մարդ քաշուեց իւր տունը մտաւ,
Սմեն երեխայ մօր զիրկն ընկաւ:
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի աղղական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուճ եկած:

Բարի տանտէրը վերկից նայեց,
Մեր թշուառ որբին ներս հրաւիրեց.
Եւ այնուհետեւ տարաբագդ տղան
Ունէր իւր համար աէր ու տիրական:



27. Ոհծելիքէի ԽՄԵԼԻՔ

Առանց ուտելիքի մարդը կըմեռնի քաղցից: Առանց խմելիքի նա կըմեռնի ծարաւից: Մարդու ամենահարկաւոր կերակուրը — հացն է, իսկ ամենահարկաւոր խմելիքը — մաքուր ջուրը:

Առաջներ.— Հաց ու պանիր, կեր ու բանիր: Մի բաժակ ջուր ով ուզի, տուր:

Ուտելիք: — Հաց, սպաս, փլաւ, տապակած...

Խմելիք: — Զուր, կաթն, թէլ, սուրճ, գինի, գարեջուր, օղի...

28. Ք Ո Յ Ն Ե Ր

Չինն սպիտակ է: Ածուխը սև է: Մոխիրը գորչէ: Ոսկին գեղին է: Խոտը կանաչ է: Երկինքը կապոյտ է: Արինը կարմիր է:

Կաթը, մածունը, թանը սպիտակ են: Թանաքը սև է: Ամպերը գորչ են: Պղինձը գեղին է: Ծառերի տերևները կանաչ են: Մանուշակը կապոյտ է: Վարդը կարմիր է:

29. ՄԵՐ ՄԵՆԵԱԿ

Մեր սենեակն ունի յատակ, առաստաղ և չորս պատ: Պատերն ու առաստաղը սպիտակ են. յատակը ներկած է կարմիր գոյնով: Պատերի մէջ շինած են դոներ և լուսամուտներ: Սենեակում կան վառարան, սեղան, աթոռներ, պահարան և դարակներ: Պահարա-

նի մէջ մենք պահում ենք մեր ամանները: Դարակներում զնում ենք մեր սպիտակեղինը, իսկ մահճակալի մօտ պատից կախուած են մեր հազուստները:

Աժաններ: — Բաժակ, ափսէ, ջրաման, ըմպանակ, շիշ, կուժ, կաթսալ, ինքնաեռ, թէլաման:

Հագուստներ և սպիտակեղին: — Վերարկու, բաճկոն, շապիկ, մուշտակ, գուլպայ, թաշկինակ, անդրավարտիք, երեսուրբէչ, սաւան:

ԳՐԵՒՐ ՎԵՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Արտագրեցէք այս երկավանկ բառերը:

Կատու: Քաղաք: Երկինք: Երկիր: Ոզնի: Թանաք: Գիտուն: Գունատ: Եղէզ: Երկար:

9. Գրեցէք ձեզանից միքանի երկավանկ բառեր:

10. Արտագրեցէք այս բազմավանկ բառերը:

Գիղացի: Քաղաքացի: Աշակերտ: Ժամանակ: Զատակասէք: Զինուորական: Մանկական: Ժամանակատր: Ընտանի:

11. Լրացրէք այս վարժութիւնը:

Հացը ուտելիք է, իսկ բաժակը... Վերարկուն հազուստ է, իսկ երեսսրբէշը... Սաւանը սպիտակեղին է, իսկ գինին... Տապկածը ուտելիք է, իսկ թէյը... Շապիկը սպիտակեղին է, իսկ ինքնաեռը... Աթոռը կարասի է, իսկ շիշը... Ջուրը խմելիք է, իսկ կուժը...

30. ԱՆՁՐԵԿ

Անձրէ՛, անձրէ՛, ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,

Բլսցնւր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ օդ:
Անձրի՛, անձրի՛, ցած արի,
Գալդ ամենիս բարի:

31. ՔՆՁԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԻ ԿԵՆՅԱՆԻՆԵՐ

Հաւը մեղ համար ձու է ածում և տանից չի հեռանում. իսկ կաքաւը, սարեակը, ծիծեռնակը ազատ թռչուններ են. նրանք, ուր ուզում, թռչում, գնում են: Չունը պահպանում է ոչխարների հօտը և մարդկանց տները, հաւատարիմ ծառայում է մարդուն: Իսկ գայլը, աղուէսը շրջում են անտառներում, մտնում են գիւղերը, ոչխար, հաւ ճանկում ու տանում, լափում են: Կովը մեղ համեղ կաթն է տալիս, եղն ու ձին օգնում են գիւղացուն աշխատանքի ժամանակ, իսկ արջը կատաղի գազան է, մարդուն թշնամի: Հաւը, շունը, կովը, ձին, ոչխարը — ընտանի կենդանիներ են, իսկ կտրաւը, գայլը, աղուէսը, արջը — վայրենի:

Ընտանի կենդանիներ: — Զի, կով, խոզ, կատու, շուն, ոչխար, ալծ, ուղտ, էջ, գոմէշ:

Վալը ենի կենդանիներ: — Արջ, աղուէս, գայլ, առիւծ, վագը, նազաստակ, ճագար, սկիւռ:



32. ԿԱՌԵՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ կառնաւկ,
Բուրզդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վաղելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ:

Մի լար, գառնաւկ սիրական,
Փոքրիկ տղի գու նման.
Կըգայ մայրդ, հետը շատ
Կըրերէ քեզ անուշ կաթ:

33. ԿԵՆՅԱՆԻՆԵՐԻ ՎԷՃՌ

Կովը, եղը և շունը վիճում էին միմեանց հետ,
թէ իրանցից որին տէրը շատ է սիրում:

— Իհարկէ նա ինձ ամենքիցդ շատ է սիրում, — ասաց եղը. — Ես նրա արօրն ու գութանն եմ քաշում, նրա համար փայտ եմ կրում: Նա ինձ լծում է սայլին, ցորենը ջրաղաց տանում, աղում է, քաղաքում ծախում և իրան ապրուստը անում: Ես որ չլինիմ, նա ի՞նչ պէս կարող է ապրել:


— 2է, նա ինձ է շատ սիրում, — վրայ բերեց կովը. — Ես նրա ընտանիքը կաթնովս եմ կերակրում: Այն մա-

ծունն ու թանը, այն սերն ու կարազը, այն իւղն ու պանիրը, որ նրանք վայելում են, ում տուածն է: Եթէ ես չլինիմ, բոլորը քաղցած կըկոտորուին:

— Զէ, չէ, ինձ երկսիցդ էլ շատ է սիրում,—օռնաց շունը,—ես նրա ունեցած-շունեցածն եմ պահպանում:

Տէրը լսեց նրանց այս վէճը և ասաց.

— Բաւական է վիճէք-դուք չգիտէք, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք և ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել: Այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:



34. ՑԱՇՆ ՈՒ ԿՈՎԸ

— Երի, իմ կովիկ,
չաղբել եմ կովիկիթ,
Պըսլզեմ տակիդ,
Քաշեմ քո պտիկ:

Մի վախիր, կովիկ,
Հորթիդ կրտամկաթ,
Նրա համար մաս
Ես կըթողնեմ շատ:

Կովը լի կուրծքը
Բացեց համարձակ,
Կաթը վեր թողեց
Իւր կրծքից արձակ:

Բայց անդուժ տատը
Բաշեց ու մղեց,
Հորթուկի համար
Կաթիւ շթողեց


35. ԳԱՄՆԵՐՆ ՈՒ ԳԱՅԼՐ

Ոչխարների հօտն արածում էր անտառի մօտ. Երկու գառը հեռացել էին հօտից և ուրախ-զուարթ խաղում էին ծառերի մէջ:

— Զարութիւն մի անէք, գառնուկներ,— ասաց մի պառաւ ոչխար,— կարող է մի փորձանք պատահել:

— Ոչխարը սուտ է խօսում,— թփերի միջից ձայն տուեց գայլը.— Նա պառաւ է և չի կարող ձեզ պէս խաղալ ու թռչկոտել, զրա համար էլ նախանձում է ձեզ: Որքան ուզում էք, վազվկեցէք այս զեղեցիկ անտառի մէջ:

Յիմար գառներն այդպէս էլ արին. Նրանք թողին, հեռացան հօտից: Գայլի ուզածն էլ այդ էք: Նա բռնեց գառներին ու կերաւ:



36. ԿՈՐԱԺ ՀՈՐԹԸ

Չիւն էր կալիս փաթիլ-փաթիլ,
Հետն էլ անձրեւ կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթն էր վնտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծքն ու ծծեր կաթնով լիքը.
«Հորթուկս մւր է», նա բառաշեց,
Խեղճ պառաւին լացացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն.
Կովն խմացաւ, որ հորթն է այն:

Կովը վագեց բառաշելով,
Պառաւը գնաց տընիքտընիքալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տողեց,
Տանտիկնոջը բան շիտղեց.
Բայց պառաւն այս անգամին
Սիրով ներեց շար հորթուկին:

37. ԽՈՃԱԿԵՐ ԵՒ ՄՌԱԿԵՐ ԵԵՆՔԱՆԻՆԵՐ

Գայլը շատ անգամ ոչխարներ ու հորթեր է լափում:
Աղուէսը սիրում է հաւի միս անուշ անել: Զներն ու
կատուներն էլ միս են սիրում: Բայց այդպէս չեն կո-
վերը, ձիերը, այծերը, ոչխարները, նապաստակները:
Կովերն ու ձիերը ամառը կանաչ են ուտում, իսկ
ձմեռը — խոտ: Նապաստակը ձմեռը ծառերի արմատ-
ներն է կրծում, իսկ գարունն արածում է մարգագետին-
ներում: Ահա թէ ինչու կենդանիներից միքանիսին մենք
խոտակեր ենք անուանում, իսկ միւսներին — մսակեր:

Ի՞նչ խոտակեր եւ մսակեր կենդանիներ են տեսել:

ԳՐԱԿԱՐԱՎԱՐԻ ԹԻՒՆԵՐ

12. Գրեցէք ձեղանից միքանի բաղմավանկ բառեր:

13. Վանկեցէք այս բառերը:

Կը-տոր: Մնալ: Գնալ: Մըկ-բատ: Կտրել: Խնդիր: Զնաղիկ:
Թոշոն: Թշնամի: Խնծոր: Մանր: Կայսր: ծոնր: Բարձր:

14. Լրացրէք այս վարժութիւնը:

Իմ գիրքը — գիրքս: Քո գիրքը — գիրքդ: Նրա գիրքը —
գիրքն (գիրքը): Իմ մայրը — մայր+: Քո մատիտը — մատիտ+:
Քո զլովը — զլուկ+։ Իմ գրիչը — գրիչ+։

15. Լրացրէք այս վարժութիւնը:

Զին ընտանի կենդանի է, իսկ աղուէսը... Արջը վայրենի
կենդանի է, իսկ կովը... Խոզը... Գայլը... Առիծը... Վաղը...
Շոնը մսակեր կենդանի է: Այծը... Ոչխարը... Էշը... Գայլը...
Առիծը... Ուղտը... Զին... Արջը...

16. Լրացրէք այս վարժութիւնը:

Թուղթը սպիտակ է: Երկինքը... Զինը... Կուպը... Վաղը...
Մանուշակը... Արինը... Կարագը... Լեղակը... Մուրը... ծովը:



38. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վազիր այդշափ արագ,
Ի՞մ սիրունիկ նապաստակ,

Յատ վոքրիկ հստակաւին,

Թաթիկներդ կըյոգնին:

Քեզ կըրերեմ կաթն ու հաց

Չաքրեջրով համեմած.

Ուտես, խմես, զօրանաս,

Բանից կարօտ չմնաս:

Եանիր-ծանր կըրայես,

Սիրտս վեր-վեր կըհանես.

Կարձակեմ քեզ, երբ ուղես,

Կերթաս, ազատ կարածես:

39. ԳԱՅՆ ՈՒ ԱՅԺԸ

Բարձր, քարքարոտ սարի գլխին արածում էր
Վայրենի այծը, իսկ ներքեր, սարի տակ, քաղցած
Գայլն էր թափառում: Նա ձայն տուեց այծին.

— Ինչու ես այդ քարերի մէջ արածում, սիրելի
այծիկ. ցած արի, այստեղի կանաչ, հիւթալի խոտը
Վայելիր:

— Հիւթալի խոտը քեզ համար պահիր, գայլ եղ-
րայր, — պատասխանեց այծը. — Ինձ այստեղ էլ բա-
ւական կերակուր կայ:

Առածներ. — Գայլն ամպ օքը կուրախանայ: — Գայլն ընկաւ
ոչխարի մէջը, վայ մէկի տիլոջը:

40. ԹԹԶՈՒՆԵՐ

Բարձր ամպերի միջից թոշում է արծիւր: Սրա-
տես աշքերը չորս արած, նա պրս է որոնում: Յան-

կարծ նետի պէս յարձակում մի որեէ կենդանու
կամ թոշոնի վրայ, յափշտակում է նրանց և ճանկերի
մէջ առած՝ իւր բունն է տանում: Բազէն էլ արծուի
նման գիշատող թոշուն է: Բայց այդպէս չեն մեր
ընտանի թոշունները — հաւերը, բաղերը, սագերը, հնդ-
կահաւերը: Նրանք կերակրում են հատիկներով, բգեղ-
ներով, որգերով և հացի փշրանքներով: Մարդիկ նրան-
ցից շատ օգուտներ են ստանում: Փոքրիկ ծիծեռնակը,
զեղձանիկը, արտուտիկը, քաղցրածայն սոխակը զուար-
ճացնում են մեզ իրանց երգերով: Մարդիկ նրանց
երգող թոշուններ են անուանում:

Ըստանի թոշուններ: — Հաւ, սագ, բադ, հնդկահաւ, աղաւնի:
Գիշատող թոշուններ: — Արծիւ, ցին, բու, բազէ, ագուաւ:
Երգող թոշուններ: — Սոխակ, զեղձանիկ, արտուտ, սարեակ,
ծիծեռնակ:

ԳՐԱԿԱՐԱԳՐԻ ԹԻՒՆԵՐ

17. Լքացրէք այս վարժութիւնը:

Սագ — սագիկ: Բադ — ... Հաւ — ... Կուտ — ... Շուն — ...
Բուն — ... Այծ — ... Մայր — ... Հայր — ... Քոյր — ...
Ցուն — տնակ: Թոշուն — ... Գոմնդ — ... Նաւ — ...

18. Վանկեցէք հետեւեալ բառերը:

Հզ-զոյշ: Սպոնզ: Զգալ: Զմայլել: Շտապել: Ստանալ: Սպա-
սել: Սպանել: Ստոր: Շտեմարան:

19. Գրեցէք և տակի տակ գիծ քաշեցէք:

Հաւ: Կաւ: Նաւակ: Թագաւոր: Հիմնաւոր: Տարաւ: Կերաւ:
Եկաւ: Թիւ: Անիւ: Ազնիւ:

20. Արտագրեցէք և ու տառի տակ գիծ քաշեցէք:

Վարդ: Դերմակ: Վարդան: Ով: Ովկիանոս: Նաւալար: Կա-
ռավարել: Զօրավար: Գրավաճառ:

21. Առանձին խմբերի բաժանեցէք:

Սազ: Բու: Մատիտ: Վազը: Եզ: Բաղ: Գլուխ: Սոխակ: Գլու-
ղակ: Բազմոց: Քանոն: Տիկնիկ: Մահճակալ: Աթոռ: Սպոնզ:
Վէզ: Վերաբերություն: Շապիկ: Գուլպայ: Թաշկինակ: Բա-
ժակ: Կաթսայ: Խնքնաեռ: Թանաքաման: Հաց: Տապակած: Սուրճ:
Գինի: Օղի: Սպաս: Փլաւ:

41. ԹՌՉՆԱԿԻ ԲՈՒՆՔ


Մանուկներն իրանց պարտիզում մի թոչնի բուն



գտան: Այնտեղ նստած էին եր-
կու փոքրիկ, մերկ ձագուկներ: Մանուկները վեր տուան նր-
րանց և բերին տուն: Հայրն
տասց նրանց.

— Զաւակներս, դուք շատ
վատ բան էք արել. դուք զի-
տէք, թէ որքան կըտխրեն ու կըվշտանան սրանց
ծնողները, երբ իրանց ձագուկներին չգտնեն բնի մէջ:
Բացի զրանից, սրանք շուտով կըտատակեն, որովհետեւ
դուք չէք կարող կերակրել:

Մանուկները սաստիկ խղճացին ձագերի վրայ և
նրանց յետ տարան պարտէզն ու զրին իրանց բնի մէջ:



42. ԺԻԺԵԹՆԱԿԻ

Խեղճ ծիծեռնակը, տես, ամե-
նեին չէ հանգատանում. ամբողջ օրը
թոշում է, ծգոտներ է հաւաքում,
կտուցովը կաւ է կրում, իւր հա-
մար բուն է շինում: Բունը շինում,
վերջացնում է թէ չէ, մէջը երեք
շաբաթ պինդ նատում և փոքրիկ
ձագուկներ է հանում: Չափուկները

որ դուրս են զալիս, բերանները բաց են անում և կե-
րակուք խնդրում: Ծիծեռնակը թոշում, դէսուզէն է
ընկնում, մժեղներ բռնում ու նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, ձագերը
թևաւորւում են, բնիցը դուրս թոշում և իրանց մօր
հետ ճանապարհ ընկնում,— կապոյտ ծովերի, բարձր
սարերի վրայից անցնում:

43. ՀՊԱՐԾ ԱՔԱՂԱՇ

Երկու աքաղաղ կոռւեցին և մէկը յաղթեց միւսին:
Յաղթուողը փախաւ, սրահի տակը մտաւ, իսկ յաղ-
թողը բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ „ծուղրու-
ղու“ կանչեց: Այդ բոպէին արծիւր թոշում էր վերևից.
Նա նկատեց հպարտացող աքաղաղին, յարձակուեց նրա
վրայ, բռնեց ու տարաւ, անուշ արաւ:

Առած. — Ով որ փքանայ, շուտով չքանայ:

44. ՍՈՂՈԽՆՆԵՐ ԵՒ ԶԿՆԵՐ

Գորտը չոլս ոտն ունի: Օձը ոտներ չունի. նա իւր երկար մարմինը քաշ է տալիս գետնի վրայ: 2որ տեղերում, անտառում և դաշտում, դուք կրտեանէք զեղեցիկ մողէսին: Թէ գորտի և թէ մողէսի փորը ման գալիս քուում է գետնին: Գորտերն ու մողէսները չեն կարող վնասել մեզ, որովհետեւ թոյն չունին: Իսկ օձերը թունաւոր են: Նրանց կծածը վտանգաւոր է և շատ մարդիկ են մահացել նրանց թոյնից: Բայց ջրային օձերն էլ, գորտերի և մողէսների նման, թոյն չունին: Նրանց ատամներն այնքան մանր են, որ չեն կարող մարդու կաշին ծակել:

Բոլոր այս կենդանիները սողուն են կոչւում:


Ծովերում ու գետերում շատ տեսակ-տեսակ ձկներ են ապրում: Նրանք լողում են իրանց լողնակներով. ձկները սառն արիւն ունին. Նրանց մարմինը ծածկուած է թեփուկներով:

Սողուններ: — Մողէս, գորտ, օձ, կրիա:

Զկներ: — Կարմրախալտ, գալաձուկ, օձաձուկ, կապոտ, տառեխ, կողակ:

45. ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ 02Ռ

Զմեոնն էր: Գիւղացինն անտառ զնաց փայտ կտրելու: Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փետացել էր: Բարի գիւղացինն իղճաց օձին, վերցրեց, զրեց



կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տաքացաւ թէ չէ, վրայ հասաւ, որ կծէ գիւղացուն:

— Աղերախտ, — ասաց մարդը, — իմ լաւութիւնը դրանով ես վճարում: — Ասաց ու կացնով խփեց, զուխը ջախջախեց:

Առաջ. — Օճն իրան տաքացնողին կոկծէ:

46. ՄԻՋԱՃՆԵՐ

Գալումը բացւում է թէ չէ, հագարաւոր միջատներ են սկսում երևալ: Օդի մէջ մոծակներն ու մլակներն սկսում են իրանց գարնանային պարը: Նախշուն թիթեռները, սոկեգոյն բզէզները, կանաչ մորեխները խաղում, զուարճանում են արեգակի ճառագայթների տակ: Բզզում է պիծակը, երգում, թռչկոտում է անզործ ճանձը: Մեղուն, ծաղկից ծաղկիկ թռչկոտելով, քաղցր մեղը է ժողովում: Իսկ աշխատասէր մըջիւնն ահապին բեռը շալակած, վազում, շտապում է իւր քանդուած բունը նորողելու:

Միջատներ: — Ճանձ, բզէզ, թիթեռ, մեղու, մըջիւն, մոծակ, մլակ, պիծակ, մորեխ, սարդ, ճպուռ:

ԳՐԱԿԱՐԱՎԱՐԺՈՒՆՆԵՐ

22. Գրեցէք և ուր որ հազկաւոր է և կամ վ գրէք:

Մեր դրացին գրա+աճառ է: Առա+օտը ես դպրոց պիտի զնամ: Վարդա+առին միզ մօտ հիմքեր կըզան: Հայրս զեղեցիկ

զա + ազան զնեց: Գիւղացին մի օրա + ար հող ունի: Թագա-
+ ութ գո + եց իր զօրա + արներին:

23. Գրեցէք և ուր որ հարկաւոր է օ կամ ո դրէք:

Ես հ+րս նամակ գրեցի: Գիւղացին հ+րից ցորեն է հանում: Սաթենիլը իր մ+ը հետ նստած է այգում: Մ+րին թուփ է: Վարդն անուշ հ+տ ունի: Հովին իր հ+տը քշեց դէպի դաշտ:

24. Լրացրէք այս վարժութիւնը:

Տառեխը ձուկ է, իսկ բգէզը... Թիթեռը միջատ է, իսկ զորտը... ճպուռը միջատ է, իսկ կարմրախայտը... Մողէսը սողոն է, իսկ մշակը... Կրիան սողոնէ, իսկ մքջինը...



47. Մեջնին Ոհմիթեթը

—Ա՛խ, ափսոս, որ անձրև է
զալիս,—ասաց թիթեռը և թաք
կացաւ տերևների տակ:

—Այն, ափսոս,—ձայն տուեց
մեղուն, որ նստած էր նրանցից ոչ հեռու:

—Եթէ լաւ եղանակ լինէր, —նորից ասաց թի-
թեռը,—ես կըթոչէի դէպի զաշտ, կըխաղայի և կը-
զուարճանայի:

—Իսկ ես կըգնայի իմ գործին և մեղը կըժողովէի
ժաղիկներից,—ասաց մեղուն:

48. Մեջնին

Հա, ծագեցաւ արեգակը,
Հա, ծաղկեցաւ մանուշակը,

Մեղուն թողեց իւր փեթակը՝
Տըզալզալով, ալզալզալով:

Մեղուն թռաւ ծաղկից ծաղիկ,
Մեղը առաւ քաղցր, անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ՝
Պըզալզալով, պըզալզալով:

Անուշ մեղը մանր աղոց,
Դեղին մոմը ամեն սրբոց,
Իսկ չարերին կըճ ու խայթոց՝
Կըսկըճալով, կըսկըճալով:

49. Մրջիինը եհ Ազահնին

Մրջիւնը ծարաւ էր: Նա մօտեցաւ առուակին, որ
ջուր խմէ: Յանկարծ նա ջուրն ընկաւ և քիչ էր մնում,
որ խեղդուի: Այդ ըոպէին առուակի վրայով մի աղաւ-
նի էր թոշում: Նա տեսաւ ջրի երեսին փոռած մըր-
ջիւնին և խղճաց վրան: Խակոյն շտապեց, ծառից մի
տերև պոկեց ու զցեց առուակի մէջ: Մրջիւնը բար-
ձրացաւ տերևի վրայ և խեղդուելուց ազատուեց:

Առուակի մօտերքը մի որսորդ թոշուններ էր որ-
տում: Նա տեսաւ մեր աղաւնուն, որ պստի վրայ նրս-
տած հանգստանում էր: Զար որսորդը հրացանը ուղ-
ղեց նրան, որ սպանէ: Մրջիւնը նկատեց այս բանը և
վագեց, պինդ կծեց որսորդի ձեռքը: Որսորդը ցնցուեց.
Հրացանը տրաքեց, բայց չդիպաւ աղաւնուն:

Ա ռ ա ծ.— Ինչ որ ցանես, այն կը հնձես:



50. Թիմաթիմ եհ ՄԱՆՈՒԻ


Մ Ա Ն Ո Ւ Ա .

— Սիրուն թիթեռ, ինձ տոն,
Թէ ինչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է, որ չես յոգիում:

Թ Ա Թ Ե Ռ .

— Սիրուն, կանաչ դաշտերում
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Եմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է, առաջանի ով մատուցած
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղիլ, ով մանուկ,
Խնայիր ինձ, ձեռք մի տար:



51. ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՀ ՔՈՐԺԻՔՆԵՐ

Մարդիկ ապրում են շինութիւն-
ների մէջ: Շինութիւնները լինում
են քարէ և փայտէ: Քարէ շի-
նութիւնները շինում են որմնա-
դիրները տաշած քարից և աղիսից,
իսկ փայտէ շինութիւնները — հիւները՝ գերաննե-

րից: Ջինութիւնները շինելիս և ուրիշ գործերի ժա-
մանակ հարկաւոր են զանազան գործիքներ:

Շինութիւններ: — Տուն, դպրոց, գործարան, ամբար (շտե-
մարան), սրահ, գոմ, ջրաղաց, ախոռ:

Գործիքներ: — Դանակ, սղոց, հերոն, ունելիք, մուրճ, կացին,
ուրագ, մկրտառ, պատառաքաղ, ածելի, բահ, թի, գուր, ասեղ, հար-
թիչ, խոփ, գութան, արօր, գերանդի, փոցին, մանգաղ, կամ, եղան:

52. ԺԱՄԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Ծառերն ու թփերը լինում են պտղատու և հո-
սարակ: Մարդիկ պտղատու ծառերն ու թփերը
տնկում են պարտէզներում. իսկ հասարակ ծառերն ու
թփերը անտառներում են բուսնում: Ծառերից միքա-
նիսը ծածկուած են լինում տերևներով, իսկ միւս-
ները — փշերով: Ծառերը մարդիկ կտրում են և ստա-
ցած փայտից իրանց համար բնակարաններ, նաւեր,
կարասիներ և ուրիշ տեսակ մանր - մունք բաներ են
շինում — ամաններ, խաղալիքներ, դասական առար-
կաներ և այլն:

Ծառեր (հասարակ և պտղատու): — Կաղնի, մալրի, եղևնի,
ուռենի, կէչի, կեռառենի, տանձենի, խնձորենի, սալորենի, բալենի,
ընկուզենի, թթենի, թզենի:

Թփեր: — Մորենի, մոշի, վարդենի, մասրի:

Պտուզներ: — Խնձոր, սալոր, տանձ, բալ, նարինչ, կիտրոն:

Գ Ր Ա Խ Ո Ւ Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

25. Դրեցէք այս բառերը և ե տառի տակ գիծ քաշեցէք:


Հոտաւէտ: ծաղկաւէտ: Քաջապէտ: Մեծապէտ: Քարեղէն: Հողէն: ծշորէն: Հայերէն: Ռուսերէն: Քրօքնէք: — Գնացէ՛ք: Կերէք: Կըգրէք: Կուտէք: Կըտեսնէք: — Յովհաննէս: Վրդանէս: Սամուէլ: Աքէլ: Սուրէն: Ռուրէն: Արմինէ:

26. Դրեցէք և ուր որ հարկաւոր է ե կամ և դրէք:

Կով+ըն արածում +ն խոտաւ+տ դաշտում: Կայ+նն սպա-
ն+ց Աք+լին: Այսօր մենք հայեր+ն դաս ունինք: Հեղին+ն Սա-
մու+լին զիրք ընծայ+ց: Մարդիկ հողեղ+ն արարածներ +ն:

27. Լրացրէք այս վարժութիւնը:

Դանակը գործիք է, իսկ դպրոցը... Օճը սողուն է, իսկ քահը...
Մայրին ծառ է, իսկ մուրճը... Մորենին թուփ է, իսկ խնձորը...
Բալենին պտղատու ծառ է, իսկ եղենին... Տանձը պտուղ է, իսկ
դորը... Վարդենին թուփ է, իսկ արջը... Մեղուն միջատ է, իսկ
սալորինին...



53. Ա Ն Ձ Ա Թ

Ի՞նչ զեղեցիկ է անտառը: Ինչքան որ ներս ես
գնում, այնքան հանդարտ է, այնքան սքանչելի է:

Բարձր, սիրուն ծառերը կտրում են ճանապարհութեան: Ծառերի կանաչ տերևների միջով կապոյտ երկինքն է երևում: Ճղների վրայ երգում են հազարաւոր թռչուններ: Բացի ծառերից անտառում շատ թփեր էլ կան: Ծառերի տակ, թփերի մէջ, բազմաթիւ կենդանիներ են ապրում—նապաստակ, աղուէս, եղջերու. կան և գիշատող գաղաններ—գայլ, արջ:

54. Ժ Ե Ր Ո Ւ Խ Ն Ի Ն Ե Լ Մ Ա Հ Հ Բ

Մի ծերունի անտառում քիչ վայտ կտրեց, կապեց,
շալակն առաւ և զնաց զէպի տուն: Բեռը բաւական
ծանր էր, տունն էլ հեռու: Ճանապարհին նա յոզնեց,
վայր զրեց բեռը և ասաց.

— Ա խ, երանի թէ մահը գար, հոգիս առնէր:

Մահն էլ, կարծես, հինց այդտեղ լինէր: Նա մօտեցաւ մարդուն և հարցրեց.

— Ահա ես, ինչ ես ուզում:

Ծերունին սաստիկ վախեցաւ և սպատասխանեց.

— Ես քեզ կանչեցի, որ այս վայրը շալակս տաս:

55. Հ Ա Յ Ա Բ Ո Յ Ս Ե Ր, Բ Ա Ն Զ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ե Ր Ե Լ Ժ Ա Հ Ի Կ Ե Ր

Երկիրը մարդուն ձրի չի կերակրում: Չատ պէտք է չարշարուի երկրագործը, շատ քրտինք պէտք է թափէ, որ առատ հաց ստանայ: Գիւղացին արօրով ու գութանով վարում է հողը, ցաքանով ցաքանում և յետոյ

զանազան բոյսեր է ցանում։ Արտերում նա ցանում է հացաբոյսեր, բանջարանոցներում—շատ բանջարեղիններ, իսկ պարտէզներում—զեղեցիկ ծաղիկներ։

Հացաբոյսեր։—Յորեն, գարի, հաճար, վարսակ, բրինձ, կորեկ։

Բանջարեղիններ։—Գետնախնձոր, գաղար, սոխ, կաղամբ, սխեռ, բողկ, վարունդ։

Ծաղիկներ։—Վարդ, շուշան, կակաչ, մեխակ, անթառամ, մանուշակ, ձնձաղիկ։

56. ՄԱՆՈՒԹԱԿ

Կապոյտ գլխով, կահաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.

Թէ առնկա փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի տահ՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ.
Ես եմ սիրուն գարնան գուշակ.
Իմ անունս է մանուշակ։



57. ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԹՃՆԱՄԻՆՆԵՐԻ

Մարդիկ շատ թճնամիններ ունին զաղանների, թոշունների և միջատների մէջ։ Գիշատիչ գաղաններն ու թոշունները յարձակում են մեր ընտանի կենդանինների և թոշունների վրայ։ Ջատ միջատներ ահագին վնաս են հացնում մեր զաշտերին, անտառներին, ալգիններին և բանջարանոցներին։ Սակայն մենք բազմաթիւ բարեկամներ էլ ունինք կենդանինների մէջ։ Ջատ փոքրիկ գաղաններ և թոշուններ ոչնչացնում են վնասակար միջատներին։ մեղունները մեղ քաղցր մեղը և մեղրամոմ են տալիս, իսկ շերամը մետաքս է պատրաստում։

Մեր բարեկամները։—Խլուրդ, ոզնի, ագռաւ, ծիծեռնակ, գորտ, մեղու, շերամ, սարեակ, կտցար։

Մեր թշնամինները։—Գալլ, արջ, աղուէս, մուկ, բաղէ, ցին, թիթեռ, մորեխ։

58. ՀԱՆՔԵՐ

Մարդիկ երկրից զանազան մետաղներ են ձեռք բերում—ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, արծիճ։ Մետաղներից շինում են շատ առարկաներ՝ բահ, խոփ, սղոց, կացին, ուրագ, օղեր, մատանիններ։ Երկրի մէջ կան և բազմաթիւ հասարակ ու թանկապին քարեր։ Հասարակ քարերը մարդիկ գործ են ածում շինու-

թիւնների համար, իսկ թանկագին քարերը—զարդարանքների:

Մ ե տ ա զ ն ե ր:—Ոսկի, արծաթ, պլատին, պղինձ, երկաթ, պողպատ, արձիճ, կլեկ:

Հ ա ս ա ր ա տ կ և թանկագին քարեր:—Ործաքար, չեչաքար, կայծաքար, կրաքար, աղքար, աղամանդ, զմբուխտ, լակինթ:

Գ Ր Ա Խ Ո Ւ Վ Ա Ր Փ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

28. Արտագրեցէք և յ տառի առակ գիծ քաշեցէք:

Ես մի քահանայ տեսայ: Այս երեկոյ ընկերս կըզայ: Էսօրուայ գործը վաղուան մի՛ թողնիր: Ամսոռուայ փուշը—ծմնոռուայ նուշն է: Մինչեւ տղան չլայ, մայրը նրան ծիծ չի տայ:

29. Արտագրեցէք այս բառերը:

Ասա՛: Չնա՛: Արա՛: Կարդա՛: Խաղա՛:—Անա: Եղիա: Երեմիա: Ովսաննա: Խոսլիա:—Սա: Դա: Նա: Ահա: Այս: Քո:

30. Լրացրէք այս վարժութիւնը:

Դարին հացաքոյս է, իսկ ոսկին... Շուշանը ծաղիկ է, իսկ աղամանդը... Կիտրոնը պտուղ է, իսկ վարունգը... Կակաչը ծաղիկ է, իսկ չեշաքարը... Թղթնին պտղատու ծառ է, իսկ ոտենին... Ժիճեննակը մարդուն բարեկամ է, իսկ մորեխը...

59. Ո Ս Կ Ի Ն Ե Հ Ե Ր Կ Ա Թ Ը Ը

Մի անգամ ոսկին ու երկաթը վիճում էին միմեանց հետ:

—Ես ամենից լաւ մետաղն եմ,—ասում էր ոս-

կին.—ամենքը սիրում են ինձ և լաւ պատիւ են տալիս: Մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից, ինչ ասես, շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիներ, օղեր. Է՞հ, էլ ի՞նչ երկարացնեմ, եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը կըզնեմ:

—Ճատ ես պարծենում, ոսկի աղա,—պատասխանեց երկաթը.—Ճմարիտ է, մարդիկ քեզ շատ երես են տալիս, բայց մենակ դու չես աշխարհիս տէրը: Եթէ մարդ ուզում է ապահով ապրել, նրան երկաթ էլ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. զազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Եթէ դու, ոսկի աղա, կարող աշխարհը գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել:

Առածներ:—Ոսկին պստիկ է, բայց զինը մեծ է:—Երկաթը տաք-տաք կըծեծն:

60. Զ Ո Ւ Թ

։

Զուրը լինում է ջրհորներում, աղբխրներում, լճերում և ծովերում. Նա մեզ հարկաւոր է խմելու, կերակուր պատրաստելու և զանազան բաներ լուանալու համար: Զուրը պտըտացնում է ջրաղացի անիւները: Ջրով հանգցնում են կրակը, ջրում են պարտէղները,

այլիները, բանջարանոցներն ու արտերը: Գետերի, լճերի և ծովերի մէջ ասլում են ձկներ, գորտեր և ուրիշ շատ կենդանիներ: Սագերը, բաղերն ու կարապներն էլ սիրում են լող տալ ջրի երեսին:

Ա.

Չմեռ ժամանակ ջուրը սառչում, սառոյց է դառնում: Անձրկի տեղը ձմեռը ձիւն է դալիս: Չիւնն ու սառոյցը զարնանը հալում են և ջուրը հոսում է զէպի գետերն ու լճերը: Տարովթիւնից ջուրը եռում, զոլորշի է դառնում: Անձրկը շատ հարկաւոր է ծառերի, թփերի, խոտերի և ուրիշ բոյսերի համար: Առանց ջրի բոյսերը կըշորնան:

61. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Մարդու մարմի մասերն են՝ զլուխը, պարանոցը, բունը, ձեռքերը և ոտքերը: Չեռքերով մենք աշխատում ենք, իսկ ոտքերով ման ենք գալիս: Մարդը պէտք է կերակրուի, որ նրա մարմինը առողջ և ուժեղ լինի: Կերակրուրը մարսաւում է ստամոքսի մէջ:

Մարմնի մասերը:—Գլուխ, պարանոց, բուն, ձեռքեր, ոտքեր:
Գլխի մասերը:—Գանգ, ճակատ, քիմքեր, յօնքեր, կողեր,
աշքեր, ականջներ, ալտեր, քիթ, շրթունքներ, բերան, կզակ:
Բնի մասերը:—Կուրծք, փոր, կողեր, մէջք:
Չեռքի (թռի) մասերը:—Ուս, արմունկ, գաստակ:
Ոտքի մասերը:—Ազդը, սրունք, դարշապար:

62. ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Մենք աչքով տեսնում ենք, ականջով լսում, քթով հոտ քաշում, լեզուով համ իմանում, իսկ մատներով շօշափում ենք և իմանում, թէ առարկան պինդ է թէ փափուկ, անուը թէ տաք, հարթ թէ անհարթ:

Եչքը տեսողութեան զգայարանքն է, ականջը—լըսողութեան, քիթը—հոտառութեան, լեզուն—ճաշակելիքի, իսկ մատները և ամբողջ մարմինը—շօշափողութեան:

63. ԳԱՐՈՒԻՆ

Զերմիկ փայլեց արեգակը,
Գարձաւ մեղ մօտ ծիծեռնակը,
Աչքը բացեց մանուշակը,
Հասաւ զարնան եղանակը:

Ամալք թնդաց գոռզոռալով,
Ճիթ-շիթ անձրի ծործորալով.
Գաշտն ու պարտէզ զուարթացան,
Ահա կապեց և ծիածան:

Մեղսն թռաւ իւր փեթակից,
Փողուել մեղը ծաղիկներից.
Մըջնիկները խումբ-խումբ, շաբքով,
Աշխատում են ժիր ու կարգով:

Օրհեած լինի գալի, զարուն,
Գու եղանակ անուշ, սիրուն,
Ջուտով րեր մեղ ուրախ զատիկ,
Ժիր զառնուկներ, կարմիր ձուիկ:

64. ՕՐԵՐ, ԱՄԻՍՆԵՐ ԵԽ ՏԱՐՈՒԱՅՑ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Ճաբաթն ունի օր—երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիւրակի: Օրերից կազմում են ամիսներ, ամիսներից —տարիներ: Տարին ունի տասներկու ամիս—յունիար, փետրուար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս,

լիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և
դեկտեմբեր:

Մարտը, ապրիլը, մայիսը—զարնան ամիսներ են,
յունիսը, յուլիսը, օգոստոսը—ամրան. սեպտեմբերը,
հոկտեմբերը, նոյեմբերը—աշնան. իսկ դեկտեմբերը,
յունուարը և փետրուարը—ձմրան:

Գարունը, ամառը, աշունը և ձմեռը տարուայ չորս
եղանակներն են:

Գ Բ Յ Ի Ո Բ Վ Ա Բ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Բ

31. Ալտագրեցէք և ուր որ հարկաւոր է յ աւելացրէք:

Աննա՛, գնա՛, հայրիկին ասա՛, որ զա ինծ մօտ: Ահա քո
տետրակը, եղիա: Քինովաբէ՛, մայրդ կըզա՞ այզի:—Այո, պա-
տասխանեց նա: Ժաշից յետո մի տղա կառքի տակ ընկաւ. ես
մօտեցա, վեր առա եւ տարա տուն:

32. Գրեցէք և աւելացրէք պակաս տառերը:

Ոչխարն+ըի հ+տն արածում է ծաղկաւ+ա դաշտում: Աստ+ած պատժում է շար+ըին: Ո+ որ կարդա+-, +ետո+
լաւ մարդ կըդառնա+: Կա+ից ըրուտը աման է շինում: Արամ,
զիրքդ ընկա+: Այս+ը անձը+ է զալիս: Այս երեկո+, թէ+ից
յետո+ մեր Սուր+նը նամակ պիտի զր+ հ+ըը:

33. Լրացրէք հետեւալ վարժութիւնը:

Արձիճը մետաղ է, իսկ զլուխը... Կուրծքը ընի մասն է, իսկ
ականջը... Յունուարը ամսի անոն է, իսկ երեքշաբթին... Յունը
մարմսի մասն է, իսկ զարունը...

34. Գրեցէք, քանի դպայարանք ունի մարդը և որոնք են նիւանք:

35. Գրեցէք առանձին-առանձին օրերի, ամիսների և տարուայ եղա-
նակների անունները:

65. Զ Ո Ր Ս Ե Զ Ա Ն Ա Կ

Չինը հալում է, խոտը կանաչում, ծառերը ծաղ-
կում, օրը երկարում: Այս ե՞րբ է լինում:

Ամիսներ անցան. օրերը տաքացան, ամպերը բար-
ձրացան, անձրկ թափեցին: Արտերն հասել են, հրն-
ձող են կանչում: Այս ե՞րբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կար-
ճացաւ, հունձը վերջացաւ, բարակ անձրկը բարձրից
է մաղւում և մուլթ գիշերը շորս կողմղ բոնում: Այս
ե՞րբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձինով ծածկուեցան, ծառե-
րից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ քաշուեցան
իրանց տները, իսկ զազանները իրանց բները: Դուրսը
ցուրտ քամին փշում է, փշում և ձինի թեփով աչքերդ
լցնում: Այս ե՞րբ է լինում:

66. Մ Ա Զ Թ Ա Ն Ք Մ Ա Ն Ե Ա Կ Ա Ն

Արի գու, արի,
Քո գալդ բարի,
Սիրան նոր տարի,
Նոր օրեր բեր մեզ:

Չին տուր սարերին,
Ենձրկ՝ արտերին,
Կարկուտը՝ շարին,
Զոյ արեր՝ մեզ:

Անթուփ ծաղիկից,
Աներկ կարմրուկից,
Բարի ցաւերից
Ազատ պահիր մեզ:

Մայրական զիտով,
Գրկաբաց ձեռքով,
Քաղցր ժպիտով
Առ քո զիրկը մեզ:

67. ԶՈՐԾ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

1.

Հմեռն էր: Աշոտը խաղում ու սահում էր սառոցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա սւրախ-ուրախ, կարմրած թշերով վաղեց տուն և ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, ինչ պատուական եղանակ է ձմեռը: Ես կրցանկանայի, որ միշտ ձմեռ լինէր:

Հայրը հանեց իւր ծոցի տետրակը և նրա մէջ նշանակեց Աշոտի ալս խօսքերը:

2.

Եկաւ գարունը: Աշոտը զուրս զնաց զաշար, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց և յետոյ վազելով հօր մօտ՝ ասաց.

—Ի՞նչ հիանալի է գարունը: Ես կրցանկանայի, որ միշտ գարուն լինէր:

Հայրն Աշոտի այս ցանկութիւնն էլ նշանակեց իւր տետրակում:

3.

Հասաւ ամառը: Աշոտը իւր հօր հնձի զնաց: Ամբողջ օրը մանուկը խաղում, զուարճանում էր—ձուկն էր որսում զետակից, ծաղիկներ հաւաքում և զլորում հոտաւէտ խոտերի մէջ. երեկոյեան նա ասաց հօրը.

—Ախ, հայրիկ, երանի թէ ամառը վերջ շունենար:

Աշոտի այս խօսքերն էլ զրուեցան նոյն տետրակի մէջ:

4.

Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում սկսեցին պտուղներ ժողովիլ: Աշոտն ուրախ-զուարթ դէս ու դէս էր վաղում, ամեն պտղից էլ անուշ անում. վերջը մօտեցաւ հօրը և ասաց.

—Աշունը տարուայ բոլոր եղանակներից ամենալաւն է:

Այն ժամանակ հայրը բաց արեց իւր ծոցի տետրակը և ցոյց տուեց Աշոտին, որ նա դարնան, ձմրան և ամառուան մասին էլ միենան է ասել:

Առածներ:—Դարնան զառն է զովելի, աշնան հաւը:—Ամառուայ փուշը՝ ձմեռուայ նուշն է:—Դառը զարնան, ծիւնը ձմրան:

68. ՏՂԱՅՈՅ ԱՂՋԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի—
Կեանը, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մայր,
Միծ ու փորբիկ քոյր, անուշիկ եղբայր:
Իսկ ես ինչ սնիմ, որ ինչ տամ Քեզի.
Առջեկ կընինեմ, կենամ ազօթքի.
«Ճնորհգ տնւր ինձ, որ ծնողներիս,
Ռւսուցիչներիս և իմ մեծերիս
Լինիմ սիրելի, իսկ Քեզ հաճելի:»

69. Հ Է Ք Ի Ա Թ

1.

Ժամանակով մարդու մէկը մի էշ սնէր, որը երկար տարիներ ծառայել էր նրան, իսկ այժմ ծերացել, ոյժից բոլորավին լնկել էր. զրա համար տէրը նրան վատ էր կերակում և ուզում էր մորթել, կաշին հանել: Եշը հասկացաւ այս և մի օր գլուխն առաւ, փախաւ-դիաց:

Գնաց-գնաց, ճանապարհին պատահեց մի որսկան շան: Խեղճ շունն այլպէս հետում էր, որ քիչ էր մնում շունչը կտրուի:

—Ինչու ես այլպէս հետում, շնն եղբայր, —հարցրեց մեր էշը:

—Ախ, պատախանեց շունչը:—Ես ծերացել եմ և էլ որսի գնալ շեմ կարով. զրա համար իմ տէրն ուզում էր ինձ սպանել. ես էլ զլուխս առայ, փախայ նրա մօտից: Բայց շգիտեմ, թէ ինչպէս պէտք է հաց ճարեմ:

—Գլուխն, ինչ կայ, —ասաց էշը, —ես գնում եմ այս մօտիկ քարը երգիչ զառնալու: Արի, ինձ հետ ընկերացիր, միասին գնանք: Ես կըերգեմ, զու էլ թմրուկ կըխփես:

Շունչը համաձայնուեցաւ և երկուոր միասին առաջ գնացին:

2.

Ջատ գնացին, թէ քիչ, պատահեցին մի կտառի:

—Բարի, փիսիկ, ինչն այլպէս տխուր ես, —հարցրեց էշը:

— Ե՞նչպէս կարող եմ ես ուրախ լինել, սիրելի էշ, — լալավին պատասխանից կատուն. — տեսնում ես, ես ծերացել եմ, բոլոր տառմներս թափուել են և էլ չեմ կարող մուկը ուստալ. դրա համար իմ տիրուհին ուզում էր վզիցս մի քար կապել, ջուրը գցել, որ խեղդուեմ: Առենք՝ այդ փորձանքից պըծայ, փախայ, բայց չգիտեմ, ուր գնամ, ի՞նչ անեմ:

— Երկուս չըլինինք, երեք լինինք, — առաց էշը. — արի, գնանք այս մօտիկ քաղաքը երգիշ գառնալու:

Կատուն համաձայնուեցաւ և երեքը միասին շարունակեցին ճանապարհը:

3.

Գնացին, գնացին, պատահեցին մի աքաղաղի, որը գռան տռաջ կանգնած՝ որքան ոյժ ունէր, կանչում էր:

— Ինչու ես այդպէս ապաղակում, աքաղաղ եղբայր, — հարցրեց էշը. — ի՞նչ է պատահել քեզ:

— Ել ի՞նչ պիտի լինի, — պատասխանից աքաղաղը. — վազը իմ տիրոջ տօնն է, շատ հիւրեք են կանչուած: Այդ պատճառով տանտիկինը հրամայեց, որ ինձ մորթեն, վազուան համար կերակուր պատրաստեն:

— Մի վշտանար, — առաց էշը. — Երեք չըլինինք, չորս լինինք. զուլաւ ձայն ունիս. արի մեզ հատ, գնանք, դու էլ երգիշ գարձիր:

Արաղաղն էլ համաձայնուեցաւ և նրանք բոլորը միասին ճանապարհ ընկան:

4.

Հատ գնացին թէ քիշ, իրեկնապահին հասան մի անտառ և վըճուեցին զիշերն այնտեղ անցկացնել: Էշն ու շունը պառկեցին մի մեծ ծառի տակ, կատուն բարձրացաւ, նստեց ճիւղի վրայ, իսկ աքաղաղը ծառի գաղաթին թառեց: Այստեղից նա չորս կողմը նայեց, տեսաւ, որ հեռուից մի լոյս է երեսում:

— Այստեղից ոչ հեռու կարծեմ մի տուն կայ, — կանչեց նա ընկերներին:

— Կեր կացէք, գնանք այնտեղ, էլի մի բան կըգտնինք ուտելու. թէ չէ այստեղ շատ վատ է, — առաց էշը:

5.

Բոլորը վեր կացան և ճանապարհ ընկան դէպի այն կողմը, որտեղից լոյս էր երկում: Ծուտով նրանք հասան մի տան, որտեղ քառասուն աւազակ էին բնակում: Էշն ամենից մեծն էր. նա գնաց, պատուհանից նայեց, որ տեսնի, թէ ներսն ի՞նչ կայ: Երբ վերադարձաւ արաղաղն հարցրեց:

— Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ այնտեղ:

— Էլ ի՞նչ պիտի լինի, — պատասխանից էշը. — տան մէջտեղը մի մեծ սեղան է բաց արած, վրան լաւ-լաւ կերակուրներ ու խմիչքներ շարած, չորս կողմը քառասուն աւազակ նստած՝ ուտում-խմում են:

Կերակուրների անունը որ լսեցին, բոլորի բերանի ջուրը գնաց: Արաղաղն ասաց.

— Ի՞նչ լաւ կըլինէր, որ այդ բոլորը մեր առաջ շարուած լինէր:

— Եյն, — հառաչեց էշը. — զոնէ մի քիշ վորես կըկշտացնէինք: Նրանք սկսեցին խորհուրդ անել, թէ ի՞նչպէս անեն, որ աւազակներին այդտեղից վախցնեն: Մտածեցին, մտածեցին և վիրջապէս վճռեցին, որ էշը բարձրանայ, կանգնի պատուհանի առաջ, շունը նստի նրա մէջքին, կատուն բարձրանայ շան վրայ, իսկ աքաղաղը թռչի, նստի կատուի գլխին:

6.

Ինչպէս որ վճռեցին, այնպէս էլ արին: Յետոյ բոլորը միասին սկսեցին ապաղակել: Էշը գուսւմ էր, շունը հաչում, կատուն մլաւում, իսկ աքաղաղը կանչում: Յանկարծ պատուհանը վշրուեց և բոլորը միասին ներս գլորուեցին: Աւազակները կարծեցին, թէ եկել են իրանց բռնելու, սարսափած թողին տուն ու տեղ, փախան դէպի անտառ: Չորս ընկերների ուզածն էլ հէնց այդ էր. նրանք իսկոյն նստեցին և այնքան կերան, որ կարծես մի ամիս ոչինչ չէին կերել:

Երբ լաւ կերան-կշտացան, ճրագը հանգըլին և պառկեցին քնելու: Էշը պառկեց բազում, աղրի վրայ, շունը գռան յետելը, կատուն վառարանի մօտ, իսկ աքաղաղը բարձրացաւ, նստեց գռան վրայ, և երկար ճանապարհ գնալուց յոգնած լինելով, շուտով բոլորն էլ քնեցին:

7.

Դէս զիշերին, երբ հեռուեց աւազակապետը տեսաւ, որ տանն էլ կրակ չկայ և ոչ մի ձայն չի լսում, առաց աւազակներից մէկին:

— Գնա, տես, թէ ինչ կայ մեր տանը:

Աւազակը գնաց, տեսաւ, որ ձայն-ծպտուն չկայ, ներս մտաւ և ուզում էր ճրագ վառել: Մուժ սենեակում կատուի աշքերը պսպղում էին. նա կարծեց, թէ լուցկի է, մօտեցաւ, որ վեր տռնի. բայց կատուն յանկարծ թռաւ նրա երեսին և մի լաւ ճանկուուեց: Աւազակը սաստիկ վախեցաւ և ուզեց վախչել. բայց շունը, որ դռան մօտ պարկած էր, վրայ հասաւ և ոտը կծեց: Երբ նա ուզում էր բազի միջով վախչել, էշը իւր յետին ոտներով մի սարսափելի աքացի տուեց նրան. իսկ աքազազը, որ այդ ազմուկից արթնացել էր, զռան վրայից կանչեց՝ «Ճուղբուղմա»:

8.

Վերջապէս աւազակը մի կերպ զուրս պրծաւ և վաղելով գնաց աւազակապիսի մօտ և ասաց.

— Օ՛հ, մեր տանը մի սատանայ կայ նստած. նա երեսս ճանկուուեց. զուտն առաջ կանդնած էր մի մարդ, ձեռքին մի դանակ բռնած. նա ոտս ծակեց: Բազումը պարկած է մի մեծ զե. նա երկու հաստ զաւազանով այնպէս խփեց ինձ, որ քիչ մնաց՝ տեղս մնայի: Իսկ կտուրը նստած է մի դատաւոր, որ կանչում էր. «Քոնեցէք, ինձ մօտ բերէք այդ աւազակին»: Հազիւ վախսայ և ազատուեցի:

Աւազակներն էլ սիրտ չարին վերապառնալ: Նրամի թողին իրանց տունը և հեռացան, ուրիշ աշխարհ գնացին: Իսկ մեր երգիչներին այնքան դուք եկաւ այս տունը, որ վճռեցին միշտ այստեղ ապրել:

70. ՄԱՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԶԱԳՈՒԿԻԾ

(Մ ա ն կ ա կ ա ն ի ս դ)

Մանուկներ:

Սիրան ձագուկ, չունիս մայրիկ և կամ հայրիկ,
Որ թռչում ես ոլոր-մոլոր մեր չորս բոլոր:

Չագուկ:

Ուրուցն այսօր տարաւ իմ մօր:

Մանուկներ:

Չագիկ, մի լար, որբիկ, մի լար,
Դու չես մնալ անտէր, անմայր:
Եկէք, քոյրեր ու եղբայրներ,
Ընկնենիք սարեր ու անտառներ,
Գնանիք-գտնենիք, ինդրենիք մէկին,
Որ մայր գտնայ այս խեղճ ձագին:

Սիրան հաւքեր, երկնից հաւքեր,
Առէք ձեղ հետ ձագին անտէր:

Կ ո ռ ւ:

Կուկ—կուր, կուկ—կու...

Մանուկներ:

Չէ, չէ, կկմւ, այլոց բնում
Չու ես դնում, մայր չես դանում:

Ա զ ո ա ւ:

Գում, գում, գում...

Մանուկներ:

Չէ, չէ, ազուաւ, գոզ գիշակեր,
Քեզ չենիք յանձնիլ, մի կոայեր:

Կ ո ռ ն կ ։

Կըռ, կըռ, կըռ...

Մանուկներ:

Չէ, չէ, կոսւնկ գարնանասէր,
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ:

Տառակ:

Վու, վու, վու...

Մանուկներ:

Զէ, չէ, տատրակ, գիտենք լաւ ես,
Աղնիւ հաւ ես, բայց լալկան ես:

Չազի մայրը:

Մարդն ուրուրին սպանեց,
Ինձ ճանկերից աղատեց,
Տուէր ձագս, խնդրում եմ,
Ո՞վ է գտել, փնտրում եմ:

Մանուկներ:

Առ, առ, մայրիկ,
Քո խեղճ ձագիկ,
Սիրուն ծրտիկ,
Որ չթռչի
Ոլոր—մոլոր
Մեր չորս բոլոր:

Չագնեկ, ձագնեկ, ուրախ կաց,
Մօրդ գնա գրկաբաց,
Հետը թռիր, հեռացիր,
Անցած ցաւդ մոռացիր:

Չագը մօրը սիրում է,
Առանց նրան տիսրում է.
Երբ որ նրան գտնում է,
Ուրախ ճշում, ճխիսում է:



504

ԱՎ

0

0

2013

3323 - 3325

ՀՀ Ազգային գրադարան



NL0295340

ՀՀ Ազգային գրադարան



NL0295339

ՀՀ Ազգային գրադարան



NL0295338

С
по
е
в